

ՀՏԴ 82.09Գրականագիտություն**Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ****ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ****E-mail: ghazarian.hasmik @gmail.com**

Հ. ՇԻՐԱԶԻ «ԱՆԻ» ՊՈԵՄԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածում քննության է առնվում Հովհ. Շիրազի պատմափիլիսոփայական երկերից մեկի՝ «Անի» պոեմի թեմատիկ և պատկերային առանձնահատկությունները: Հայ գրականության պատմության մեջ պոեմն ունի նորարարական մեծ արժեք: Պատմական այդ բարդ ժամանակաշրջանի համապատկերում բանաստեղծը կերտել է գեղարվեստական հզոր կոթող, որով էլ պայմանավորված է պոեմի հաջողվածությունը: Հայոց հնագույն մայրաքաղաք Անիի կյանքի լայնակտավ պատկերումն ու կործանման պատճառներն են վեր հանվում պոեմում, որն անշուշտ ունի արդիական հնչեղություն:

Շիրազը բարձր արվեստով է ստեղծել դարաշրջանին բնորոշ մարդկային բնավորությունները, տվել նրանց գեղագիտական բնութագրերն ու առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ Հովհ. Շիրազ, Անի, խոհափիլիսոփայական պոեմ, 11-րդ դար, Բագրատունյաց թագավորություն, Հովհաննես-Սմբատ, Վահրամ Պաշկավունի, կորուսյալ հայրենիք, կարոտ, Մասիս, ողբերգություն, բռնազավթում, ծորացող վերք:

А.Хачатрян

ТЕМАТИЧЕСКИЕ И ИЗОБРАЗИТЕЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ПОЭМЫ ОВ. ШИРАЗА «АНИ»

В данной статье подвергаются анализу тематические и изобразительные особенности одного из историко-философических произведений Ов. Шираза – «Ани». В контексте того трудного исторического периода армянской литературы, поэт создал мощнейший литературный памятник, чем и был

обусловлен успех произведения. В поэме раскрывается широкий спектр жизни города Ани, причины его разрушения, что, несомненно, имеет современное звучание. Шираз искусно воссоздал образ человека того времени, раскрыл с литературно-научной точки зрения его характер и особенности.

Ключевые слова: Ованнес Шираз, Ани, философская поэма, 11-ый век, царствие Багратидов, Ованнес-Смбат, Ваграм Паглавуни, потерянная Родина, тоска, Масис, трагедия, захват, кровоточащая рана.

A. Khachatryan

THE THEMATIC AND VISUAL FEATURES OF THE POEM

«ANI» BY H. SHIRAZ

This article analyzes the thematic and visual features of the historical and philosophical work «Ani» by H. Shiraz. In the context of that difficult historical period of Armenian literature, the poet created a great literary monument, which made the work successful. The poem reveals a wide range of life of Ani, the reasons of its destruction, which undoubtedly has a modern sound. Shiraz skillfully recreated the image of a man of that time, revealed his character and features from a literary and scientific point of view.

Key words: Ovannes Shiraz, Ani, philosophical poem, 11-th century, Bagratid kingdom, Ovannes- Smbat, Bahram Pahlavuny, lost motherland, homesickness, Masis, tragedy, capture, bleeding wound.

Հովհ. Շիրազն «Անի» պոեմը գրել է ստալինյան ժամանակներում՝ 1950-1951 թվականներին, սակայն ինչպես Շիրազի մյուս ստեղծագործությունները, այնպես էլ «Անի» պոեմը հանդիպել է լուրջ դիմադրության: Խորհրդային գաղափարական պարտադրանքի տարիներին Շիրազը հանդգնեց գրել պոեմ կորուսյալ Անի քաղաքի մասին և բարձրաձայնել՝ «Բանամ ճամփիս դռները փակ, տեսնեմ Անին ու նոր մեռնեմ»: Բազում մեղադրանքներով անընդհատ հետաձգեցին պոեմի հրատարակումը: Բանաստեղծը մեծ հույսեր ու սպասելիքներ ուներ պոեմի հետ կապված, բայց պետհրատարակչությունն անընդհատ հետաձգում է, հասկանալի պատճառներով:

1954թ. «Հատընտիր», «Քնար Հայաստանի» գրքերում Շիրազը պոեմից որոշ հատվածներ է զետեղել, սակայն նա կյանքից հեռացավ, այդպես էլ չտեսնելով «Անին» ամբողջական հրատարակված, թեև բանաստեղծն անհագ փափագ ուներ, որ պոեմը պետք է տպագրվեր Բազրատունյանց ազատագրված ու վերաշինված Անի մայրաքաղաքի տպարանում:

Միայն 2011թ. գրականագետ, դոկտոր-պրոֆեսոր Ս. Մուրադյանի խմբագրմամբ ու առաջաբանով Երևանի պետական համալսարանի հովանավորությամբ լույս ընծայվեց «Անի» պոեմը՝ բաղկացած 308 էջից՝ 11 հազար տողով:

Պոեմում Շիրազը պատկերել է 11-րդ դարի առաջին կեսի իրադարձությունները, երբ Բագրատունյաց հայոց մայրաքաղաքը հայտնվել էր թշնամու թիրախում, և, ինչպես միշտ, գործում էին ներքին պառակտիչ ուժերը: Շիրազը թեև գեղարվեստականացրել է պատմական այդ ծանր ու դժնի ժամանակաշրջանը, սակայն պոեմի նյութն ու շարադրանքն այնքան պատմականորեն ու անհերքելի վավերագրական հիմքերով են ներկայացված, որն ընթերցելիս թվում է, թե անցնում ես «պատմության քառուղիներով»:

Պոեմը բաղկացած է 18 գլուխներից, վերջին մասից և վերջերգանքից, որոնցում բանաստեղծը տվյալ դարաշրջանին հատուկ ոճով է ներկայացրել մարդկային կերպարներն ու նրանց շուրջը զարգացող գործողությունները:

Անի քաղաքը Շիրազի համար կորուսյալ հայրենիքի խորհրդանիշ էր, բաց ու ծորացող վերք, հայոց անցյալի փառքի մեծ խորհրդանիշ:

Բագրատունիների՝ շուրջ 100 հազար բնակիչ ունեցող մայրաքաղաքն ապրում էր բուռն ու ծաղկուն կյանքով, ուներ զարգացած արհեստագործություն ու ճարտարապետություն, գիտական և մշակութային կարևորագույն կենտրոն էր:

Անին հայտնի է որպես «հազար ու մի եկեղեցիների քաղաք»: Գլխավոր եկեղեցին՝ Անիի Աստվածածին կամ Անիի Մայր տաճարը, կառուցվել է Տրդատ ճարտարապետի կողմից՝ 989-1001թթ., որն էլ համարվում է հայ և համաշխարհային ճարտարապետական լավագույն նմուշներից մեկը:

Միջնադարում այստեղով էին անցնում բազմաթիվ առևտրային ճանապարհներ, և հենց այս բարենպաստ աշխարհագրական ու ռազմավարական դիրքի, հարստության ու ճոխության պատճառով էլ Անին դարձել էր հարևան գիշատիչ տերությունների թիրախը, որոնք ամեն կերպ ջանում էին տիրանալ Արևելքի մարգարտին:

Գագիկ Ա թագավորից հետո թուլացավ Բագրատունիների պետությունն ու սկիզբ առան ներքին խժոժությունները: Ահագնացան երկպառակությունները թագավորի երկու որդիների՝ Հովհաննես Սմբատի և Աշոտ Դ-ի միջև: Նրանք երկուսն էլ հավակնում էին տիրանալ գահին՝ հաշվի չառնելով երկրում տիրող ծայրահեղ ծանր վիճակը: Թուլացած երկրի անմիաբանությունը կործանարար եղավ հայոց ճակատագրի համար:

Հովհ. Շիրազն այս ողբերգական անցքերն է նկարագրել «Անի» պոեմում: Բանաստեղծի խոսքը մերթ եղերական է, մերթ ըմբոստ, մերթ պահանջկոտ ու ցասումնալից, որն, անշուշտ, բխում է կորուսյալ հայրենիքի ցավից կծկված սրտից: Ինչպես նկատել է գրականագետ Հրանտ Թամրազյանը. «Շիրազի ստեղծագործությունը իր լավագույն դրսևորումներով դառնում է մեր ժողովրդի պատմության մի որոշակի շրջանի բանաստեղծական արձագանքը, ներաշխարհի նրբին պատկերը, ազնիվ տենչերի և հույզերի երգը»¹:

¹ Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր. 1975, էջ 223:

Պոեմում Շիրազն իր գրչին հատուկ խոստն ու պատկերավոր ոճով է նկարագրում Անիի ողջ հմայքն ու գեղեցկությունը.

Աստվածամոր հոնքերն անգամ
Այնքան նրբին կամար չունեն՝
Որքան գմբեթն այս հայկական
Որքան Անին աստվածաշեն¹:

Իսկ ահա, գեղագիտական մի այլ պատկեր է ստեղծում Անիով զմայլված ու հիացած, առաջին անգամ Անի ոտք դրած ու ճարտարապետական կառույցներով տարված, հայոց հանճարի դրսևորումներով արբեցած մարդու զգացողությունները պատկերելիս.

Առաջին անգամ Անին տեսնողը
Պարիսպներով էր զարգանդում, ապշում,
Ետ քաշվում ահից, իսկ ներս մտնողը,
Հիացքի սանձը հազիվ էր քաշում...²

Գրականագետ Ս. Մուրադյանը գրել է. «Մեր ժողովրդի պատմական հիշողության, գիտական ու գեղարվեստական գրականության մեջ Անին մնացել էր իր երկու տարբեր, անգամ հակադիր վիճակներով, անցյալը փառահեղ ու հերոսական, ներկան՝ անկյալ ու ողբերգական»:³

Կորուսյալ հայրենիքի հանդեպ ունեցած անհագուրդ կարոտի, անսպառ սիրո, կորածը հետ բերելու արդար պահանջատիրության ելակետերից էր բանաստեղծը սկզբնավորել պոեմի բարոյական հենքը:

Հայրենապաշտ Շիրազը բարձր արվեստով է կերտել դարաշրջանին բնորոշ մարդկային բնավորություններն ու կերպարները, տվել նրանց գեղագիտական բնութագրերն ու տիպականացրել նրանց խոսքը:

Էպիկական հզոր շնչով է կերտված սպարապետ Վահրամ Պահլավունու կերպարը, ով թուլամորթ Հովհաննես Սմբատ արքայի գաղտնի կտակի բացահայտումից հետո համախմբեց Անիի ողջ ազնվականությանն ու բնակչությանը և ուժեղ դիմադրություն ցույց տվեց հայոց մայրաքաղաքը պաշարած բյուզանդացիներին: Պահլավունիների տոհմն ականառու դեր է ունեցել միջնադարյան Հայաստանի ռազմաքաղաքական, հոգևոր ու մշակութային կյանքում: Վահրամ Պահլավունին փառավորվեց ու պատմության էջերում մնաց որպես հայրենիքի անձնուրաց նվիրյալ ու քաջարի զորավար:

Պոեմում բանաստեղծն իր ազգային գաղափարախոսությունն ու ժողովրդի ազգային բաղձանքը պատկերավոր ու բարձր արվեստով հնչեցրել է քաջազուն սպարապետի շուրթերով.

-Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,

¹ *Շիրազ Հ., Անի, Եր., 2011, էջ 61:*

² *Նույն տեղում, էջ 60:*

³ *Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր., 2003, էջ 56:*

Երբ իմ թրի շողը չունես,-
 Դժբախտ Անի, Վան ու Ոստան,
 Անի, երբ քո հողը չունես:
 Ինչպե՞ս ասեմ քեզ Հայաստան,
 Երբ քո Մասիս սարը չունես,
 Երբ ոտք ելնող մանկանց շուրթին
 Քո հայերեն բառը չունես...¹

Դարերի մրմուռն ու կորուսյալ հայրենիքի ողբն է խտացված շիրագյան մեծակտավ այս երկի պատկերավոր հատվածներում, ինչն ակամայից ընթերցողի առջև բացում է հայրենի եզերքի ոչ հեռավոր անցյալը: Թեև հայոց թրի շողն ու Անիի գահը, դժբախտ Ղարսն ու Արդահանը, Մասիսն ու Վանը տեսիլք են դարձել հայոց ներկայի համար, սակայն բանաստեղծն աննահանջ հույսով է լցված ապագայի հանդեպ: Ահավասիկ.

Մայրս ասաց. «Միշտ չի մնա բախտդ կորած, մի՛ տխրիր,
 Աչքիդ լույսը շատ մի՛ թափե, գլխակորած, մի՛ տխրիր», -
 Մայրս գնաց, հույսը մնաց, մարգարե հույսն իմ հոգու,
 Ա՛գգ իմ, Մասիսն է գալիքդ, հույսն է նորված, մի՛ տխրիր...²

Անիի՝ և նրանով ողջ կորուսյալ հայրենիքի պատկերները, անկախ թեմայից ու բովանդակությունից, առկա են Շիրագի գրեթե բոլոր ստեղծագործություններում:

Անին դարեր ի վեր ոգեշնչման աղբյուր է եղել ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ հեղինակների համար, ովքեր իրենց նախորդներին ավանդել են հարուստ գիտական ու գեղարվեստական գրականություն:

Արիստակես Լաստիվերցին առաջին հայ հեղինակն է, ով նկարագրել է 1047-1048թթ. սելջուկյան արշավանքները՝ մինչև Անիի գրավումը (1064թ.): Նա մանրամասն ներկայացրել էր տվյալ ժամանակաշրջանում հայոց աշխարհում տեղի ունեցած արհավիրքները, կոտորածներն ու բռնի տեղահանումները. «Մանուկները մայրերի գրկերից հափշտակվելով՝ քարերին էին խփվում, իսկ մայրերը իրենց արցունքով ու արյամբ էին թրջում նրանց. հորը և որդուն նույն սուրն էր խողխողում. ծերերն ու երիտասարդները, քահանաներն ու սարկավագները միևնույն սրով մահ ճաշակեցին, այնպես որ ամբողջ քաղաքը լցվեց դիակներով, և սպանվածների մարմինները վերածվեցին ճանապարհի»³:

Լաստիվերցու «Պատմություն» երկը իր հերթին սկզբնաղբյուր է դարձել բազմաթիվ ուսումնասիրությունների, գրական գեղարվեստական ստեղծագործությունների համար:

¹ Նույն տեղում, էջ 304:

² *Շիրագ Հ., Անտիպ էջեր, գիրք 2-րդ, Եր., 2019, էջ 184:*

³ *Լաստիվերցի Արիստակես, «Պատմություն», Եր., 1971, էջ 100:*

Անիի մասին բազմաթիվ ու բազմազան են հիշատակություններն օտար աղբյուրներում՝ վրացական, արաբական, բյուզանդական, պարսկական պատմագիրների ու ժամանակագիրների երկերում:

Պատմաբաններն իրենց գիտական ուսումնասիրություններում հիմնականում կենտրոնացել են պատմական փաստերի, դեպքերի ու իրադարձությունների վրա, իսկ ահա մեծատաղանդ Հ. Շիրազն իր իսկ բնորոշմամբ «Անի» խոհափիլիսոփայական պոեմում համատեղել է թե՛ պատմականը և թե՛ գեղարվեստականը: Գեղարվեստական համոզչության հետ միասին պոեմն ունի նաև գիտական հավաստիություն:

Առանձնակի դրամատիկությամբ է վեր հանել Հովհաննես Սմբատ արքայի կերպարը, ով որպես թուլամորթ ու կամազուրկ է պատկերված պոեմում, սակայն բանաստեղծը լրիվությամբ չի ոչնչացնում արքային՝ որպես դավաճանի, թեև պոեմի մի հատվածում նրան համեմատում է Վասակ Սյունու հետ: Նույնիսկ մի պահ թվում է, թե Շիրազը նրա մեղքը թեթևացնելու փորձեր է անում, Հռոմոսի վանքի կառուցումը, բյուզանդացիների կողմից նվերների չընդունելը, մինչև անգամ ինքնասպան լինելը գեղարվեստականացնելով: Սակայն նրա՝ բյուզանդացիների հարկադրմամբ Անին հանձնելու գաղտնի կտակի ստորագրումն ու պատերազմից խուսափելն արդեն իսկ աններելի դավաճանություն է: Նախնիների ուրվականների հետ առերեսվելով՝ մեղքերի թողություն է ակնկալում արքան, սակայն մերժվում ու ամոթանք է ստանում բոլորից, իսկ ահա հոր կողմից ստանում է վերջին հարվածը.

-Ո՛վ կների, քո վերջն հասավ,-

Դու չես ծնվել իմ հայ գարմից...¹

«Թոնդրակեցիները» պոեմը կերտելիս, որը նախորդում է «Անի» պոեմին, բանաստեղծը Հովհաննես-Սմբատ արքայի նկատմամբ պահպանել է հարգալից վերաբերմունք, քանի որ այդտեղ արքան համախմբված պայքարում էր հայրենիքի համար: Նա փորձել է ահագնացած թոնդրակեցիներին դարձի բերել, սակայն «Անի»-ում խուսափել է դրսի թշնամու հետ պայքարից ու դարձել Անիի փոքրոգի վերջին արքան:

Լինելով Բագրատունյաց գահատիրության ժառանգորդը՝ Հովհաննես-Սմբատ արքան իր ֆիզիկական, ինչու չէ նաև հոգևոր պատրաստվածությամբ չկարողացավ դիմակայել ժամանակի մարտահրավերներին: Նրա այդ հանցավոր ու կործանարար ծրագրերի հանցակիցն է դառնում շահամոլ կաթողիկոս Պետրոս Արշարունին, ով 1021թ. արքայի անունից կտակ գրեց բյուզանդական կայսեր Վասիլ Բ-ին, որ արքայի մահից հետո Անին հանձնում է Բյուզանդիային:

Բանաստեղծը պատկերավորման արվեստի հատուկ նրբությամբ ու գեղեցկությամբ է պատկերել Այծեմնիկին, ում կերպարի մեջ խտացրել է «հայոց

¹ Նույն տեղում, էջ 238:

փափկասուն կանանց»: Այծեմնիկ Անեցու կերպարին անդրադարձել են մի շարք հայ պատմիչներ, նկարագրել նրա սխրագործություններն ու կյանքի գնով հայրենիքին նվիրվելը:

Այծեմնիկն իր շուրջը հավաքեց ավագանու մի խումբ աղջիկների, նրանց զինավարժության դասեր տալու համար: Աղջիկները սովորում էին նետաձգության և նիզակամարտի արվեստը: Եվ երբ արյունարբու թշնամին իր մեծաքանակ զորքով շուրջ մեկ տարի պաշարեց Անին, Այծեմնիկն՝ աղջիկների իր ջոկատով կովի ամենաթեժ պահին հայտնվեց միջնաբերդի վրա: Նրա ջոկատը մարտնչում էր հայ ռազմիկների հետ հավասար քաջությամբ: Թշնամու նետերը տեղում էին կարկտի պես, սակայն նրանցից և ոչ մեկը չէր նահանջում: Մոռացած ցավ ու մահ, Այծեմնիկն իր մարմնից հանում է թշնամու նետերն ու դրանք հետ արձակում նրանց վրա:

Հովհ. Շիրազն այսպես է ներկայացրել թշնամու ապշանքն ու սարսափը, ինչու չէ նաև հիացմունքը կապված Այծեմնիկի հետ. թերևս անհնար է առանց հուզվելու կարդալ այս տողերը.

-Ո՛վ շահ , առյուծ է Անին կատաղի,-

Այծամի նման որմն էլ դիմացավ...

Եւ Այծեմնիկի պատմությունն արին.

-Հայոց կույսն էլ է հայ որձի նման,

Մեր խփած նետերն իր մարմնից հանում՝

Մեր աչքն էր հանում մեր խփած նետով,

Կատաղում էինք, բայց և հիանում,

Նա մի այծյամ էր առյուծի սրտով:¹

Եվ այսպես, դարեր շարունակ հայ կինը՝ հայոց պատմության դժվարին ու ճակատագրական պահերին ու արհավիրքի ժամին՝ երբեք անմասն չի մնացել մեր գոյապայքարից, որն էլ քանիցս ապացուցել է հայ կնոջ քաջությունն ու հերոսությունը: Հայոց դարավոր պատմությունը հարուստ է խիզախ ու համարձակ, անձնվեր ու հայրենասեր հայուհիների գործած սխրանքներով:

Պոեմում արծարծված հարցերից մեկն էլ դարեր ի վեր քանակի խնդիր ունեցող հայ ժողովրդի սակավաթվությունն էր, և բանաստեղծը մեր փրկության ելքերից մեկը տեսնում է ազգի շատացման ու բազմացման մեջ.

«Հայոց թիվն հայոց վերքն է, որ այսքան ,

Դարեր դարձել է վերքն Հայաստանի»²

և վստահեցնում է.

- Միայն մեծաթիվ ազգն է անառիկ

Մեծաթիվ ազգերն իշխում են հավետ³

¹ *Շիրազ Հ., Անի, Եր., 2011, էջ 282-283:*

² *Նույն տեղում, էջ 194:*

³ *Նույն տեղում, էջ 194:*

«Անի» պոեմն ավարտվում է հայենիքի ցավով կեղեքված բանաստեղծի այս անհաս փափագով.

Հազար տարվա, կարոտ ունի իմ երազը հազարաթև՝

Ա՜խ, թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին՝ ու նոր մեռնեմ:

Որպես ոսկի վաղվա գուշակ, որպես Մասիսն իմ անուշակ

Գլխին հայոց մի դրոշակ, տեսնեմ Անին ... ու չմեռնեմ:¹

Անին կորուսյալ Հայաստանի մյուս քաղաքների ու բնակավայրերի նման սպասում է իր իրական տերերի՝ հայերի վերադարձին, ովքեր նոր շունչ ու ոգի կտան ավերակների մեջ էլ շքեղաշուք Անիին, ապահովելով նրա նոր վերածնունդն ու լուսավոր ապագան:

Սակայն պատմությունից դասեր չքաղելով՝ ինչպես 11-րդ դարում Անին, այնպես էլ 21-րդ դարում Շուշին է բռնել սպասման՝ այդ երկար ու տառապալից ուղին, որի հաղթահարումը պահանջում է դառն ու կորստաբեր, հասուն ու խելամիտ պայքար:

Մեծատաղանդ բանաստեղծը մեր դարավոր պատմությունը վերակերտել է ներկայի ու ապագայի տեսանկյունից՝ խորապես գիտակցելով անցյալի և գալիքի համադրումն ու պատճառահետևանքային կապը:

Կորուսյալ էրգրի կեզ մորմոքը, գերված հայրենիքի մշտաթրույն կսկիծն ուղեկցել է բանաստեղծին ողջ կյանքի ընթացքում:

Գրականություն

1. Լաստիվերցի Ա., Պատմություն, Եր., 1971:
2. Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, հոդվածներ, Եր. 1975 :
3. Մուրադյան Ս., Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր. 2003:
4. Շիրազ Հ., Անի, Եր., 2011:
5. Շիրազ Հ., Անտիպ էջեր, գիրք 2-րդ :

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ Նույն տեղում, էջ 306: